

## **ՌՈՒՔԵՆ ԱՂՈՒՋՈՒՄՅՅԱՆ**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի  
կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ,  
հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

## **ԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի  
«Կառավարչական գործունեության հոգեբանություն»  
գ/հ լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող

# **ԱՊԱԳԱ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՍԹՐԵՍԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՄԱՅԻՆ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՓՈԽՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ**

Հոդվածում ներկայացված են ապագա կառավարիչների սթրեսակայունության և կամային ինքնակարգավորման դրսևորման առանձնահատկությունները և փոխապայմանավորվածությունը: Իրականացվել է մասնագիտական կրթության գործընթացում այդ որակների փոփոխությունների բացահայտմանն ուղղված հետազոտական աշխատանք ապագա կառավարիչների շրջանում: Հետազոտության արդյունքները կարող են հիմք հանդիսանալ ապագա կառավարիչների պատրաստման դասընթացների կազմակերպման համար:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ.** կառավարչական գործունեություն, սթրեսակայունություն, կամային ինքնակարգավորում, գործունեության արդյունավետություն, ապագա կառավարիչ:

Ժամանակակից կառավարչական գործունեությունը հատուկ պահանջներ է ներկայացնում կառավարչի մասնագիտական կարևոր հոգեբանական որակներին: Մասնագիտական գործունեության հաջող իրականացման տեսանկյունից կարևորվում են ոչ միայն կառավարչի մասնագիտական գիտելիքները, այլ նաև կառավարչական որակները, որոնք պայմանավորում են տվյալ մասնագիտական գործունեությանն անձի համապատասխանու-

թյունը: Այս առումով հատկանշական է մասնագիտական կրթության գործընթացում ապագա կառավարիչների մասնագիտական կարևոր հոգեբանական որակների զարգացումը, ինչը հնարավորություն կտա հնարավորինս ամբողջական դարձնելու մասնագետի ձևավորման գործընթացը: Սույն հոդվածի շրջանակներում մենք նպատակ ենք ունեցել բացահայտելու ապագա կառավարիչների սթրեսակայունության և կամային ինքնակարգավոր-

ման առանձնահատկություններն ու փոխապայմանավորվածությունը: Այդ նպատակով մեր կողմից իրականացվել է փորձարարական հետազոտություն: Հետազոտությանը մասնակցել են ՀՀ պետական կառավարման ակադեմիայի տարբեր մասնագիտությունների 100 մագիստրանտներ: Հետազոտությունն իրականացվել է երկու փուլով՝ ուսուցման առաջին տարում, և ուսուցումն ավարտելիս՝ նպատակ ունենալով բացահայտելու մասնագիտական կրթության գործընթացում այս որակների փոփոխությունները: Կառավարչի գործունեությունում սթրեսակայունությունն ու կամային ինքնակարգավորման ընդունակությունը կարևորվում են, քանի որ գործունեության առանձնահատկությունները կառավարչի այս որակներին հատուկ պահանջներ են ներկայացնում: Անձի անկայունությունն ու սթրեսային իրավիճակների նկատմամբ անհանդուրժողականությունը կարող են հանգեցնել սխալ որոշումների կայացման, հաղորդակցման խանգարումների, ժամանակի սխալ կառավարման, ինչը մեծագույն խոչընդոտ է կառավարչի գործունեության արդյունավետությանը [1, 2, 3, 4]:

Գիտական աղբյուրների վերլուծությունից պարզ է դառնում, որ սթրեսակայունության հստակ սահմանում չկա, և տարբեր հեղինակներ այն տարբեր կերպ են մեկնաբանում [5, 6, 7]:

Սթրեսակայունությունը՝ որպես համակարգային անհատական հոգեբանական առանձնահատկություն է դիտարկում Ս. Վ. Սուբբոտինը: Ըստ նրա՝ այդ առանձնահատկությունը կայանում է անհատի բազմամակարդակ

որակների յուրահատուկ փոխկապվածությունում, ինչն ապահովում է համակարգի կենսաբանական, ֆիզիոլոգիական և հոգեբանական հոմեոստազը և հանգեցնում է կենսագործունեության տարբեր պայմաններում շրջակա միջավայրի հետ սուբյեկտի օպտիմալ փոխազդեցության [6, էջ 351]: Նշված սահմանմանը միանում է Ա. Ա. Բարանովը՝ նշելով, որ տվյալ երևույթը դիտարկվում է հիմնականում ֆունկցիոնալ տեսանկյուններից՝ որպես բնութագիր, որն ազդում է գործունեության արդյունավետության վրա. նույնը հետագայում նշում է նաև Ն.Վ. Սուվորովը [6, էջ 352]: Բ. Խ. Վարդանյանի և Ս. Բ. Սուբբոտինի մոտեցումներում նկատվում է սթրեսակայունության երկակի բնույթի մասին գաղափարը՝ որպես որակ, որն ազդում է գործունեության արդյունավետության վրա և որպես բնութագրիչ, որն ապահովում է անձի՝ որպես համակարգի հոմեոստազը: Սրա հիման վրա սթրեսակայունությունը կարելի է դիտարկել որպես գործունեությունից բխող կամ անձնային որակ [5]: Հոգեբանական սթրեսի ուսումնասիրության առաջատար մասնագետ Վ. Ա. Բոդրովի կարծիքով՝ սթրեսակայունության ուսումնասիրման ելակետ պետք է լինի այդ հասկացության սահմանումը, որը մի շարք հեղինակներ հանգեցնում են միայն հուզական կայունությանը: Սթրեսակայունություն ասելով՝ նա հասկանում է մարդու ինտեգրատիվ որակ, որն առաջին հերթին բնութագրում է արտաքին և ներքին միջավայրի արտակարգ գործոնների նկատմամբ նրա հարմարման մակարդակը: Երկրորդ հերթին այն որոշվում է գործունեու-

թյան սուբյեկտի ֆունկցիոնալ հուսալիության մակարդակով և ընթացիկ ֆունկցիոնալ վիճակի և այդ պայմաններում վարքի կարգավորման հոգեկան, ֆիզիոլոգիական ու սոցիալական մեխանիզմների զարգացվածությամբ [6, էջ 352]:

Սթրեսակայունության վերը նշված վերլուծություններից ակնհայտ է, որ այն համակարգային անձնային որակ է և մեծապես պայմանավորում է ինչպես անձի հոգեկան առողջությունն, այնպես էլ մասնագիտական գործունեության արդյունավետությունը: Յուրաքանչյուր մասնագիտական գործունեության համար բնորոշ են տվյալ գործունեության առանձնահատկություններից բխող սթրեսաձին գործոն-

ներ՝ սթրեսորներ, որոնց նկատմամբ էլ անձը պետք է իր մասնագիտական գործունեության ընթացքում դրսևորի սթրեսակայունություն: Մասնագիտական գործունեությունն առավել արդյունավետ կլինի այն դեպքում, եթե սթրեսակայունությունը տվյալ գործունեությանը բնորոշ սթրեսորների նկատմամբ ձևավորվի ոչ թե մասնագիտական գործունեության, այլ մասնագիտական կրթության ընթացքում:

Մագիստրանտների սթրեսակայունությունն ուսումնասիրել ենք Ռ. Դեյթոյի սթրեսակայունության թեստի միջոցով: Աղյուսակ 1-ում ներկայացվում են սթրեսակայունության միջին և միջինից ստանդարտ շեղման արդյունքները (տես Աղյուսակ 1).


*Աղյուսակ 1. Սթրեսակայունության միջին և ստանդարտ շեղման ցուցանիշները:*

	I կուրս		II կուրս	
	M	σ	M	σ
Անհատական դրսևորումներ	38.9	10.4	39.9	13.4
Անհատական պահանջմունքներ	39.6	12.9	39.5	13.4
Անձնային կարողություններ	23.0	7.2	26.2	8.7
<b>ԴԱԹ</b>	<b>101.7</b>	<b>34.6</b>	<b>105.6</b>	<b>30.0</b>

Մեր կողմից իրականացված վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ երկու տարիների շրջանավարտների մոտ էլ սթրեսի ցուցանիշն ունի չափավոր արտահայտվածություն: Ստանդարտ շեղման ցուցանիշը բարձր չէ. տվյալները բաշխված են միջինի շուրջ, խումբը միատարր է: Այսինքն՝ ստան-

դարտ շեղման ցուցանիշները ևս չափավոր արտահայտվածության շրջանակներում են: Մագիստրոսական ուսուցման սկզբում և վերջում միջինների որոշակի տարբերություն նկատվում է, սակայն, ըստ Ստյուդենտի t չափանիշի, միջինների միջև տարբերությունը նշանակալի չէ:

Նկար 1. Սթրեսակայունության միջին դրսևորումներն առաջին և երկրորդ կուրսում:



Հուզական հավասարակշռվածության և սթրեսակայունության առկայությունն ապագա կառավարչի մոտ նշանակում է իր հուզական ոլորտի նկատմամբ բարձր ինքնավերահսկողության հնարավորություններ: Նման որակներ ունեցող ղեկավարն ունակ է բոլորի հետ պահպանելու հավասարակշիռ, հարգալից, գործնական հարաբերություններ, քիչ գրգռվել և անընդհատ ճնշել իր բացասական հուզական մղումները: Նման պայմաններում անհրաժեշտ է համակարգված աշխատանքներ կատարել ուսումնառության ընթացքում բարձր սթրեսակայունություն ձևավորելու ուղղու-

թյամբ: Իհարկե, սխալ կլինի մտածել, որ միայն բարձր սթրեսակայունության շնորհիվ կարելի է հասնել կառավարչական գործունեության արդյունավետության: Դա կառավարչի փսիխոգրամմայի տարրերից մեկն է, որը, առանց այլ բաղկացուցիչ անձնային որակների արտահայտվածության, չի ապահովում գործունեության արդյունավետություն, բայց որի բացակայության դեպքում գործունեության արդյունավետությունը նվազում է:

Մեր կողմից իրականացվել է նաև սթրեսակայունության փոփոխությունների վերլուծություն՝ ըստ մասնագիտությունների:

Աղյուսակ 2. Սթրեսակայունության միջին դրսևորումներն՝ ըստ մասնագիտությունների:

	Կառ. հոգ.	Հանր. կառ.	Իրավ.	Քաղ.	Հանր. ֆիզ. կառ.
Անհատական դրսևորումներ	$M_1=47$	$M_1= 37.7$	$M_1= 39.5$	$M_1= 47.2$	$M_1= 45.1$
	$M_2=47.5$	$M_2=37.9$	$M_2= 37.8$	$M_2=38.5$	$M_2= 43.5$
Անհատական պահանջմունքներ	$M_1= 48$	$M_1= 34.6$	$M_1= 38.6$	$M_1= 49.9$	$M_1= 46.7$
	$M_2= 43.5$	$M_2= 39.5$	$M_2= 43.7$	$M_2=33.8$	$M_2=37.9$
Անձնային կարողություններ	$M_1= 29$	$M_1= 27.4$	$M_1= 25.2$	$M_1= 29.5$	$M_1= 21.1$
	$M_2= 28.5$	$M_2= 25.5$	$M_2= 27.4$	$M_2= 24.2$	$M_2= 25.8$
ԴԱԹ	$M_1= 124$	$M_1= 93.6$	$M_1= 101.1$	$M_1= 126.6$	$M_1= 118.8$
	$M_2= 119.5$	$M_2= 102.4$	$M_2=108.9$	$M_2= 96.5$	$M_2= 107.0$

Ակնհայտ է, որ սթրեսակայունության մակարդակը բարձրացել է հանրային կառավարում և իրավագիտություն մասնագիտությունների մագիստրանտների մոտ: Դա հնարավորություն է տալիս դիմակայելու մասնագիտական գործունեության առանձնահատկություններով պայմանավորված ինտելեկտուալ, կամային և հուզական ծանրաբեռնվածություններին՝ առանց գործունեության, սեփական առողջության համար վնասակար հետևանքների: Կառավարման հոգեբանություն, քաղաքագիտություն և հանրային ֆինանսների կառավարում մասնագիտությունների մագիստրանտների սթրեսակայունության մակարդակն իջել է:

Այսպիսով՝ սթրեսակայունությունն անձի կարևորագույն բնութագրական հոգեբանական որակներից մեկն է, որի բարձր կամ գոնե չափավոր արտահայտվածությունն ապահովում է

համակարգի կենսաբանական, ֆիզիոլոգիական և հոգեբանական հավասարակշռվածությունը և հանգեցնում է կենսագործունեության տարբեր պայմաններում շրջակա միջավայրի հետ սուբյեկտի օպտիմալ փոխազդեցության: Ապագա կառավարիչների մոտ, ըստ կատարված հետազոտության արդյունքների, այն գտնվում է չափավոր մակարդակում, ինչը կարող է հանդիսանալ նրանց մասնագիտական գործունեության արդյունավետությունն ապահովող կարևորագույն և անհրաժեշտ տարրերից մեկը:

Մեր կողմից որպես կառավարչի մասնագիտական կարևոր հոգեբանական որակ ուսումնասիրվել է նաև կամային ինքնակարգավորման ընդունակությունը: Մագիստրանտների մոտ կառավարչական հմտությունների ձևավորվածության մակարդակի գնահատման գործընթացում նպատակահարմար է կիրառել Ա. Գ. Զվերկո-

վի և Ե. Վ. Էյդմանի կողմից մշակված կամային ինքնակարգավորման հետազոտման մեթոդիկան: Ընդհանուր առմամբ՝ կամային ինքնակարգավորման արտահայտվածության աստիճան ասելով՝ հասկանում են սեփական վարքն ամենատարբեր իրավիճակներում վերահսկելու չափը, իր գործողությունները, վիճակներն ու հակումները գիտակցաբար կառավարելու ունակությունը: Կամային ինքնակարգավորման զարգացվածության մակարդակը կարող է բնութագրվել ընդհանուր առմամբ և առանձին բաղադրիչների տեսքով՝ որպես համառություն և ինքնավերահսկողություն [8]:

Կառավարչական ուղղվածությամբ մագիստրատուրայի շրջանավարտների մոտ այս որակները հատկապես կարևոր են, քանի որ նրանց մասնագիտական գործունեության արդյունավետությունն ապահովող կարևոր գործոններից են: Դա պայմանավորված է նրանց անձին՝ մասնագիտական գործունեության և առկա սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայմանների կողմից առաջադրվող պահանջներով: Կամային ինքնակարգավորման միջին և միջինից ստանդարտ շեղման ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 3-ում:

*Աղյուսակ 3. Մագիստրանտների մոտ կամային ինքնակարգավորման միջին և ստանդարտ շեղման ցուցանիշները:*

	I կուրս		II կուրս	
	M	$\sigma$	M	$\sigma$
Ինքնակարգավորում	10.4	2.7	11.9	3.2
Համառություն	8.1	2.8	10.1	2.9

Կամքի ինքնակարգավորումն ըստ տվյալ մեթոդիկայի դրսևորվում է երկու ցուցանիշների համախմբի տեսքով՝ ինքնակարգավորում և համառություն: Ինքնակարգավորման ցուցանիշն ունի միջին արտահայտվածություն: Տվյալ սանդղակն արտացոլում է հուզական հակազդումների և վիճակների կամաձին հսկողության մակարդակը: Սանդղակով բարձր միավոր հավաքում են հուզականորեն կայուն, իրենց տարբեր իրավիճակներում տիրապետող մարդիկ: Նրանց բնորոշ ներքին հանգստությունը, ինքնավստա-

հությունն ազատում է անորոշության հանդեպ վախից, բարձրացնում է նորի ընկալման պատրաստակամությունը: Ժամանակակից կառավարչական ոլորտում այս որակի բարձր արտահայտվածությունը կարող է որոշիչ լինել, քանի որ սոցիալ-տնտեսական, քաղաքական պայմաններն անձին ներկայացնում են արագ կողմնորոշվելու, նորարարությունների նկատմամբ բաց լինելու, անորոշ իրավիճակներում կարևոր որոշումներ կայացնելու, վարքի բարձր ինքնավերահսկողություն իրականացնելու զարգացած ընդունա-


կություններ ունենալու պահանջ:

Տվյալ սանդղակի հաջորդ բևեռը ինքնաբերությունն է, իմպուլսիվությունը՝ համակցված վիրավորվածության հետ:

Մեր հետազոտական խմբերում համառության ցուցանիշն ունի միջին արտահայտվածություն: Համառություն սանդղակը բնութագրում է մարդու մտադրությունների ուժը, նրա՝ սկսած գործն ավարտին հասցնելու ձգտումը: Նման արտահայտվածությունը ենթադրում է, որ տվյալ անձինք գործունյա են, աշխատասեր, ակտիվ, ձգտում են կատարել նախանշվածը: Նրանց ուժեղացնում են նպատակին

հասնելու խոչընդոտները, չեն շեղում այլընտրանքները, նրանց համար գլխավոր արժեքը սկսած գործն ավարտին հասցնելն է:

Իրականացված հետազոտության արդյունքներից ակնհայտ դարձավ, որ ապագա կառավարիչների կամքի ինքնակարգավորման ցուցանիշը միջին է, ձգտում է բարձրի: Կարող ենք ասել, որ մագիստրանտները հուզականորեն կայուն են, զարգացած է նրանց վարքի վերահսկողությունն ու ինքնակարգավորման ընդունակությունները, նպատակասուլաց են, ձգտում են սկսած գործը միշտ ավարտին հասցնել, դրանից ելնելով՝ որոշակի իրավիճակներում կարող են համառություն դրսևորել:



Ըստ մասնագիտությունների՝ կամքի ինքնակարգավորման դրսևորման փոփոխությունների վերլուծությունը

ներկայացվում է աղյուսակ 4-ում (տես Աղյուսակ 4.):

Աղյուսակ 4. Մագիստրանտների մոտ կամային ինքնակարգավորման միջին ցուցանիշներն՝ ըստ մասնագիտությունների:

	Կառ. հոգ.	Հանր. կառ.	Իրավ.	Քաղ.	Հանր. ֆիզկ. կառ.
Ինքնակարգավորում	$M_1=10.0$	$M_1= 10.7$	$M_1= 8.5$	$M_1= 10.5$	$M_1= 10.0$
	$M_2=10.5$	$M_2=10.9$	$M_2= 9.5$	$M_2=11.2$	$M_2= 9.5$
Համառություն	$M_1= 12.1$	$M_1= 11.7$	$M_1= 10.9$	$M_1= 12.3$	$M_1= 11.9$
	$M_2= 11.5$	$M_2= 12.3$	$M_2= 10.9$	$M_2=13.6$	$M_2=12.2$

Ըստ մասնագիտությունների՝ փոփոխությունների դիտարկումից ակնհայտ դարձավ, որ գրեթե բոլոր մասնագիտությունների մագիստրանտների մոտ նկատվում է միջին ցուցանիշների աճ, սակայն միջինների միջև տարբերությունները, ըստ Ստյուդենտի t չափանիշի, նշանակալի չեն:

Սույն հետազոտության շրջանակներում մեր կողմից իրականացվել է նաև սթրեսակայունության և կամային ինքնակարգավորման փոխադասարկության բացահայտում, ինչի արդյունքում ակնհայտ է դառնում, որ այս ցուցանիշների միջև առկա են որոշակի կապեր: Մասնավորապես՝ բացասական կորելացիոն կապ է դրսևորվում համառության ցուցանիշի և Դեյթոյի անձնային թեստի արդյունքների միջև ( $r=-0.394$ ,  $P < 0,01$ ), ինչը վկայում է այն մասին, որ որքան ցածր է անձի համառությունը, այնքան Դեյթոյի անձնային թեստի ցուցանիշը բարձր է: Նշանակալի բացասական փոխկապվածություն է դրսևորվում նաև ինքնատիրապետման ցուցանիշի և Դեյթոյի անձնային թեստի արդյունքների միջև ( $r=-0.441$ ,  $P < 0,001$ ): Սա նշանակում է, որ ինքնատիրապետման ցածր մակարդակն ուղեկցվում է Դեյթոյի անձնային թեստի բարձր ցու-

ցանիշով: Հարկ ենք համարում նշել, որ Դեյթոյի անձնային թեստի բարձր ցուցանիշը խոսում է ցածր սթրեսակայունության մասին: Որքան այս ցուցանիշը ցածր է, այնքան տվյալ անձը սթրեսակայուն է:

Այսպիսով՝ իրականացված հետազոտության արդյունքներից ակնհայտ է դառնում, որ ապագա կառավարիչների կամային ինքնակարգավորման և սթրեսակայունության ցուցանիշներն ունեն միջին արտահայտվածություն, և դրանց միջև առկա են որոշակի փոխկապվածություններ: Կարող ենք ասել, որ այս որակները հանդիսանում են փոխլրացնող, և դրանցից մեկի բարձր կամ ցածր արտահայտվածությունն ունեկցվում է մյուսի նույնանման արտահայտվածությամբ: Սա հնարավորություն է տալիս կառավարիչների անձնային զարգացման ծրագրերի կազմման գործընթացում այս որակների զարգացման նկատմամբ դրսևորելու համակարգային մոտեցում: Մասնագիտական կրթության գործընթացում այս որակների զարգացումը կնպաստի մասնագիտական գործունեությունում ճիշտ որոշումների կայացմանը, արդյունավետ հաղորդակցմանը, հավասարակշռվածության ու կայունության պահպանմանը:



## Գրականություն

1. **Ռ.Վ. Աղուզումցյան, Լ.Հ. Պետրոսյան, Ա.Ռ. Խաչատրյան, Ն.Ա. Զեյնալյան,** Մագիստրանտների հոգեբանական հատկությունների նկարագիր, Եր., ՀՀ պետական կառավարման ակադեմիա, 2015
2. Ա.Ռ. Խաչատրյան, Կառավարչի անձի ձևավորումը որպես մասնագիտական կրթության խնդիր / «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» IV միջազգային գիտաժողովի նյութեր. – Երևան, Էդիթ Պրինտ հրատ., 2013թ. – 455 էջ. էջ 86-88:
3. **Ա.Ռ. Խաչատրյան,** Կառավարիչների սթրեսակայունության դրսևորման առանձնահատկությունները, Արդիականության մարտահրավերները. Փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ: ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 50-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.: ԵՊՀ հրատ., 2014.-492 էջ, 401-404:
4. Агузумцян Р.В., Психологические подходы и особенности магистерского обучения и подготовки. Высшая школа: опыт, проблемы, перспективы: материалы межд. научно-практ. конференции. Москва, IX РУДН, 21-22 апреля 2016, Науч. ред. В. И. Казаренков, М. А. Рушина, Ч 2, с. 271-274
5. Банников В.В., Влияние социально-психологических компонентов стрессоустойчивости на эффективность деятельности персонала организации: дис. канд. психол. наук: М., 2003. с. 156.
6. Бодров В.А., Психологический стресс: развитие и преодоление. М: Изд-во <<ПЕР СЭ>>, 2006. С. 523.
7. Урбанова А.А., Психология управления, учебное пособие, Минск, Харвест. 2007г., 640 с.
8. Фетискин. Н.П., Козлов В.В., Мануйлов Г.М., Социально-психологическая диагностика развития личности и малых групп. М., изд-во института психотерапии. 2002, 490 с.

# **ОСОБЕННОСТИ ПРОЯВЛЕНИЯ И ВЗАИМОСВЯЗЬ СТРЕССОУСТОЙЧИВОСТИ И ВОЛЕВОЙ САМОРЕГУЛЯЦИИ БУДУЩИХ УПРАВЛЕНЦЕВ**

**РУБЕН АГУЗУМЦЯН**

Академия государственного управления РА, заведующий кафедрой психологии управления, кандидат психологических наук, профессор

**АНИ ХАЧАТРЯН**

Академия государственного управления РА, младший научный сотрудник научно-исследовательской лаборатории «Психология управленческой деятельности»

В статье представлены особенности и взаимосвязь стрессоустойчивости и волевой саморегуляции будущих управленцев. Была проведена исследовательская работа среди будущих управленцев для выявления изменений

данных качеств в процессе профессионального обучения. Итоги исследования могут послужить основой для организации курса подготовки будущих управленцев.

## **THE PECULIARITIES OF MANIFESTATION AND INTERRELATION OF STRESS RESISTANCE AND VOLITIONAL SELF REGULATION OF FUTURE MANAGERS**

**RUBEN AGHUZUMTSYAN**

Head of Chair of Management of the Public Administration academy of the Republic of Armenia, Ph. D, Professor

**ANI KHACHATRYAN**

Public Administration academy of the Republic of Armenia, Research laboratory of Psychology of Administrative Activities, Junior Researcher

In the article we presented interrelation of stress resistance and volitional self regulation of future managers. There was launched experimental research among future managers to reveal the

changes of those traits in the process of professional education. The results of the research can be a base for organization of preparing course for future managers